Վանո Սիրադեղյան

Ինչ է ծամծմում Հմայակը

Այն, ինչ Հմայակ Հովհաննիսյանը փորձում է ասել «27»-ի մասին, հավանաբար, մինչեվ վերջ էլ չասի: Եթե, իհարկե, չծեծեն բաժնում: Որովհետեվ նրա նպատակը, ըստ երեվույթին, ասելը չէ այն, ինչ գիտի կամ ինչի մասին կռահում է: Ակնարկում է, որ քաղաքական իրադարձություններ էին տեղի ունենալու հոկտեմբեր-նոյեմբերին, եթե չկանխվեին պառլամենտի գնդակահարությամբ:

Պատգամավորը մի կողմից շանտաժ է անում իշխանությանը այն պատճառով, որ իրեն մոռանում են, մյուս կողմից, համենայն դեպս, Ստեփան Դեմիրճյանի կողմ ռեվերանս է անում՝ չեմ չյորտ նե շուտիտ: Թվում է, թե վտանգավոր խաղ է խաղում Հմայակը, կյանքի համար վտանգավոր: Բայց միայն թվում է: Այն, ինչ անում է պատգամավորը, ըստ ամենայնի, վտանգավոր կլիներ մեկ-մեկուկես տարի առաջ, երբ հասարակությունը դեռ հիշում էր Կարեն Դեմիրճյանին: Հիմա, երբ իշխանությունը բացարձակապես չի վախենում ոչ դատարանական, ոչ արտադատարանական բացահայտումներից, Հովհաննիսյանի շանտաժը անվտանգ է իր համար: Պետք է արժանին մատուցել պատգամավորի զգացողությանը՝ հիմա ոչ մի քաղաքական ցնցում չի լինի, եթե անգամ հեռուստատեսությամբ ցուցադրեն Ալիկ Հարությունյանի տեսագրությունը, եվ այնտեղ նա պնդի, որ սպանությունը կատարել է Քոչարյանը: Ամենաշատը, որ կհետեվի դրան, այն կլինի, որ մի «վրդովված» դաշնակ կամ մի «թասիբով» ղարաբաղցի կգնդակահարի Ալիկ Հարությունյանին հրապարակայնորեն եվ կհայտարարի, որ պատրաստ է պատիժը կրել, որովհետեվ չէր կարող հանդուրժել անմեղ նախագահին զրպարտելը: Եւ կնստի մեկուկես տարի, ինչպես Տիգրան Հայրապետյանի մարդասպան վարորդը: Եւ մնացած կյանքը

կապրի առանց նյութական հոգսի: Ահա այս մթնոլորտն է Հմայակ Հովհաննիսյանի անվտանգության երաշխիքը, եվ նրա շանտաժը կարող են բանի տեղ դնել, կարող են նաեվ չդնել: Այն հանգամանքը, որ իշխանությունը չի վախենում վկայությունից ու բացահայտումներից, արդեն իսկ խոսում է իշխանության աղետալի լկտիության մասին: Այդպիսի լկտիություն հնարավոր է հասարակության անհուսալի բարոյալքության պայմաններում: Հմայակ Հովհաննիսյանը կարող էր կռահել կամ կարող էր ստույգ իմանալ, որ սպանությանը նախորդող օրերին նեղ շրջանում պատրաստվում էր սահմանադրական օրենքի այն նախագիծը, որով պիտի կրճատվեին նախագահի լիազորությունները, ինչի մասին վերջին կես տարում պարբերաբար հայտարարում էին «Միասնության» գործիչները: Այդ իդեան կարող էր արդեն հասունացած լինել Մեղրիի հարցի կապակցությամբ կամ պատրվակով:

Մեղրիի հարցի ֆոնի վրա այդպիսի նախագիծ ոչ միայն պահանջվող 2/3 ձայները կստանար պառլամենտում, այլեվ 4/5-ը: Այն որոշումը, որ պիտի (ըստ Միրոյանի) այդ օրը ընդուներ «Միասնության» քաղաքական ղեկավարությունը, եվ որով Հովհաննիսյանին մխիթարում են հանձնաժողովի նախագահի՝ իր թեկնածությունը չպաշտպանելու համար, այլ որոշում լինել չէր կարող, բացի որոշումը՝ սահմանադրական օրենք ընդունելու մասին: Այդ մասին կարող էր չիմանալ Հովհաննիսյանը, բայց չէր կարող չիմանալ նախագահի աշխատակազմը: Այս վարկածի օգտին է խոսում ՆԳ մարմինների ուժեղացված ծառայության անցնելը 27-ի օրերից առաջ: Այդպիսի մտադրության գոյություն ունենալու մասին է խոսում նաեվ այն հանգամանքը, որ սպանության երկու ժամկետ գոյություն ունի: Այսինքն, լարվածությունը տեվել է ամբողջ հոկտեմբեր ամիսը: Եւ, ըստ ամենայնի, «Միասնության» ղեկավարությունը սպասելիս է եղել Կաթողիկոսի օծմանը: Հակառակ կողմը նույնպես սպասել է Կաթողիկոսի օծմանը, որովհետեվ դա միակ օրն էր, երբ կարելի էր առանց կասկածներ հարուցելու ապահովել, որ սպանության օրը դահլիճում չլինեն մարդիկ, ովքեր պիտի չլինեին դահլիճում: Որեվէ այլ օր այդքան դաշնակ-մաշնակի բացակայությունը, այն էլ կառավարության հետ հարց ու պատասխանի ժամին, կարող էր կասկածելի թվալ եվ, ով գիտի, գուցեեվ զգոնացնել Վազգեն Սարգսյանին: Հետաքրքիրն այն է, որ 27-ին նախորդած լարվածության մասին դժկամությամբ են խոսում նաեվ զոհվածների հարազատները: Այնքան

դժկամությամբ, որ երբ ՆԳ նախկին նախարարը դատարանի դահլիճում ժխտում է ուժեղացված ծառայության գոյությունը, ակնհայտորեն ուրանալով 27-ից առաջ «Առավոտին» տրված իր հարցազրույցը, որտեղ, փաստորեն, գլուխ է գովում այդ առիթով, տուժողների ներկայացուցիչները չեն բարեհաճում հարցնել՝ իսկ չկա՞ արդյոք նախարարի հրաման՝ ուժեղացված ծառայության մասին: Մարդ է, զզված է, կարող էր ասել՝ կա, կարող էր ասել՝ չկա: Բայց հարց տվող չկա: Ոչ մեկը չի ուզում ֆիքսել գոյություն ունեցած արտակարգ դրությունը: Ո՞ւմ կարգադրությամբ է ՆԳՆ-ն ուժեղացված ծառայության անցել: Նախագահի՞: Իսկ գուցե վարչապետի՞:

Իսկ ինչո՞ւ է ոստիկանական ուժեղացված ծառայության պայմաններում գտնվող երկրի անվտանգության ծառայության պետը երկրից դուրս գալիս: Եւ հատկապես այն օրը, երբ Կաթողիկոս են օծում: Ո՞ւմ կողմից էր Սերժ Սարգսյանը մինչեվ սպանությունը: Ուշադրություն դարձրեք, որ Կաթողիկոսի օծմանը չեն գնացել ոչ միայն Ազգային ժողովի նախագահն ու վարչապետը, ովքեր պառլամենտում են, այլեվ նախագահը, որը իր շենքում է: Այլեվ անվտանգության ծառայության պետը, որը, պարզվում է հետո, նույնիսկ երկրում չէ: Նույնիսկ ՆԳ նախարարը Էջմիածնում չէ: Էջմիածնում չեն եվ դահլիճում չեն նաեվ դաշնակցության երկու ղեկավարները: Բոլորը սպասում են ինչ-որ բանի: Ամեն ոք այնտեղ է, որտեղ իրեն ապահով է զգում:

Ուշագրավ է նաեվ, որ Հմայակ Հովհաննիսյանը հիշատակում է Լեոնարդ Պետրոսյանին: Նշանակում է նա, այնուամենայնիվ, ավելին գիտի, քան կարելի է ենթադրել: Լեոնարդ Պետրոսյանի սպանությունը ուղիղ նշանառությամբ ոչ մի բացատրություն չունի, բացի այն, որ սպասվելիք քաղաքական զարգացումներում նա առանցքային դեր էր ունենալու, եվ այդ զարգացումները լինելու էին ղարաբաղյան կլանի դեմ: Հայաստանի եվ Ղարաբաղի ժողովուրդը ավելի հեշտությամբ կընկալեր տեղի ունեցածը, եթե Վազգենի ու Դեմիրճյանի կողքին այդ դեպքում լիներ ղարաբաղցի հայտնի գործիչ: Այդ փուլում այդ մարդը Լեոնարդն էր: Հաշվարկը ճշգրիտ էր: Սակայն հնարավոր է, որ Լեոնարդ Պետրոսյանը իր մերձավորներին ավելին է ասել, քան ասում են մերձավորները «իրեն խփելու» մասին. մարդը վախից շատախոս է դառնում: Եւ հնարավոր է, որ «Միասնության» մտադրության իրագործումն արագացնելու որոշման մասին

ուտեչկա է եղել եվ հենց այդ շրջանակից: Թեպետեվ, նման բանը լիովին գաղտնի պահելն անհնար է, եվ հազիվ թե անակնկալն էր համարվում հաջողության երաշխիքը: Երաշխիքը պառլամենտի ձայներն էին, Դեմիրճյանը եվ Մեղրին: Բայց էլի, հավանաբար, միջամուխ եղավ հայկական սենտիմենտալությունը՝ սպասում էին Կաթողիկոսի օծմանը: Օծումը եղավ արյունով:

17.11.2002